

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

1. — Տարօրինակ մրցումն շատուկերու-
թեան. — Աշխարհիս առաջին շատուկերը.

Corriere della Sera իտալական լրա-
գրին Ամերիկայէն թղթակից մը կը գրէ
հետեւեալը.

Նիւ Եօրք 29 Օգոստ. գիշեր

Քաղաքական զլխաւոր գլխօյներու տա-
րեկան տօնախմբութեանց եղանակն է:
Այսօր այս գլխօյներէ մին իր անդամա-
կիցներուն մէջ տարօրինակ մրցում մը
կազմակերպեց, որուն սակայն իրաւունք
ունէին մասնակցելու անոնք միայն որ
120 քիւլէն աւելի կը կշռեն:

Ասոնց մրցման նիւթն էր ամենաշքեղ
մրցանակ մը, որ սահմանուած էր անոր՝
որ կարենար ամենաքիչ ժամանակի մէջ
ամենաշատ քանակութիւն ուտել խորո-
վածի:

1600 անդամակիցներու ներկայու-
թեամբ, որոնք կը ծափահարէին շարու-
նակ, Ֆրանք Տոդսլէր քաղաքապետական
ժողովոյ անդամը, որ ճիշտ 161 քիւլայ կը
կշռէ, չորս ու կէս քիւլայ խորոված միս
կերաւ, իսկ մեծ տասնութիւն թաս սուրճ, կե-
րու տասնութիւն կարագոտած հաց և եր-
կու պնակ գետնանիւճոր: Այս քաջագոր-
ծութենէ վերջ հռչակուեցաւ իրեն մըր-
ցանքին յաղթողը, և աշխարհիս առաջին
խորովածի շատակերը:

Մրցակիցները տասնուհինգ հոգի էին,
և այս ահաւոր լափողներու տեսարանը,
որոնք պատրաստ էին խորովածներու վը-
րայ յարձակելու՝ հանդիսատեսներու խան-
դավառութիւնը և շատ քնական նախանձը
շարժեց:

Բայց մրցակիցներէն տասը՝ ստիպուե-
ցան ետ քաշուիլ մրցակցութենէ մէկու կէս
քիւլայ եզան միս ուտելէ վերջ: Մնացող
հինգը շարունակեցին ուտելնին մինչև որ
հետզհետէ անոնք ալ ստիպուեցան քա-
շուիլ՝ ասպարէզը թողլով յաղթականին:

Իրենք ալ սակայն իւրաքանչիւր աստի-
ճանաւ կերած էին խորոված մսոյ քիւլայ՝
2, 2-300, 3, 3-800, և 4-500: Մրցման
ժամանակ ներկայ էին — որովհետեւ չգիտ-
ցուի թէ ինչ անակնկալներ կրնան պա-
տահիլ այսպիսի մրցումներու ժամանակ —
քաղաքապետական դատաւոր մը և չորս
բժիշկներ:

Դիտելու է, որ բոլոր այս միս լափող
անձինքը, շատ ծանօթ և շատ յարգուած
քաղաքագէտներ էին Նիւ Եօրքի մէջ, ուր
կը վայլեն նաեւ շատ լուրջ մարդիկ ըւ-
լալու համարումն ալ:

(Տէյլի քեյեկրաֆ)

2. — Հաշուաւետ ծիր.

Ձարիֆ և Մոհամատ երկու ձիեր են
չորս պարոն Գրալ Ֆոն Էլպէրֆէլդ վար-
ժեցուց կարդալու, գրելու և հաշիւներ
ընելու, մինչև իսկ թիւերը երրորդ կա-
րողութեան բարձրացնելու և քառակուսի
արմատները հանելու չափ:

Ասոնց վրայ շատ բաներ գրուեցան
մինչև հիմա. բայց հիմա իրենց բուն քա-
շութիւնը վաւերացուց երեք գիտնական
ներու յանձնաժողով մը — կազմուած
Շոլոդկարտի՝ Գրէմէր և Յիւլէր և Պագլ-
լիոյ՝ Սառազին ուսուցչապետներէ, որոնք
շատ օրեր այն իմաստուն ձիերը ճննու-
թեան ենթարկեցին, ուրիշ մի քանի ձիե-
րու հետ միասին՝ որոնք դեռ իրենց ուս-
ման ընթացքին մէջ կը գտնուին: Այս
նկատմամբ իլ ակտիւ տեղ գտալիս իտա-
լական լրագրի խմբագրութիւնը դիմեց
Պեդլինի թղթակցի մը զանազան հար-
ցումներով, որոնց այսպիսի պատասխան
մ'եկաւ. «Ապացուցուած է որ այս ձիերը
գիտեն թիւեր կարդալ սեւ տախտակի վը-
րայ՝ թէ՛ թուանշանով գրուած ըլլան և
թէ՛ գրերով, թէ՛ գերմաներէն և թէ՛ քաղ-
ղիներէն, և թէ՛ այս թիւերու միջոցաւ կա-
րող են կատարել որ և իցէ գործողութիւն
որ ուզուի իրենցմէ գրաւոր կերպով կամ
բերանացի: Դիտուած է որ դեռ միայն
մի քանի ամիսներէ ի վեր վարժեցուցած

ձիերը կրնան պարզ հաշիւները կատարել, բայց չեն կրնար զօուարին խնդիրները լուծել։ Ստուգուած է նոյնպէս որ Զարիֆ և Մոհմատ, որոնք երկար ժամանակէ ի վեր վարժուած են, ամէն զօուարին հաշիւներու ճիշտ լուծումը կու տան։ Դիտուած է որ, ցուցակի մը միջոցաւ ուր այս բուրենի իւրաքանչիւր գիրին տեղ թուանշան մը դրուած է, ձիերը ոտքերնին գետին զարնելով այնքան անգամ որչափ որ նշանակուած է իւրաքանչիւր գրի համապատասխան թուանշաններով, կրնան բացատրել թիւերը, բառեր և անուններ, նոյն իսկ եթէ առաջուց բնաւ զանոնք լսած չըլլան։ Եւ երբեմն կրցած են մինչեւ իսկ ինքնաբերաբար հասկնալի բառեր և խօսքեր արտայայտել, միշտ թիւերու և գիրերու ցուցակին համեմատ ոտքերնին զարնելով գետին։ Ստուգուած է դարձեալ որ այս ամէն փորձերու միջոց, ձիերուն բնաւ նշան մ'եղած չէ։ և յիշաւի փորձերը յաջողած են լիովին նոյն իսկ երբ ամէն ներկաները հեռացած են, այնպէս որ ձիերը զանոնք չկարենան տեսնել ։

3. — Գաղղիոյ Բարստուկները .

Շարժական արժէքներու միջազգային վիճակագրութեան մը համեմատ, Գաղղիան ունի 168 կամ 170 միլիարդ արժէքով շահագործելի թուղթեր։ Գաղղիոյ պետութեան և ուրիշ պետութեանց թուղթեր՝ որոնք գաղղիացի դրամատէրներու կը պատկանին, 1910ին մինչև հարիւր տասը միլիարդ կը բարձրանային, զրէթէ հինգ միլիարդ շահով մը։ 1911ին վերջը, այս գումարներն արդէն շատ աւելի բարձրացած էին։ Դիտելու արժանի բան է գաղղիական թղթապանակի ամենամեծ առաւելումը . 1850 ին միայն ինը միլիարդ ունէր, 1902ին՝ իննսուն միլիարդ և 1910ին հարիւր տասը միլիարդ։ Եւ չալ սակայն հաւասարապէս յառաջադիմած է և 1619 միլիոնէ անցած է այժմ 4503 միլիոնի։ Պետութեան 110 միլիարդ գրամազլէն՝ որ այժմու Գաղղիոյ թղթապանակը կը կազ-

մեն, տասը կամ տասնումէկ միլիարդ Ռուսիոյ փոխ տրուածն է, կէս միլիարդ Անգլիոյ, երեք կամ չորս միլիարդ Սպանիոյ և փորթուգալի, երեք կամ չորս միլիարդ Եգիպտոսի և Սիւէզի ջրանցքին, չորս կամ հինգ միլիարդ Արճնդինայի, Պրագայի և Միքսիգոյի . իսկ Տաճկաստանի?... .

4. — Արեւ, արեւ .

Ո՞րն է լաւագոյն հականեխիչը թէ՛ տուներու և թէ՛ զգեստեղինաց համար։

Այս է քիչ շատ ամէն տանտէկիններու մեծ մտահոգութեան առարկայն։ Գործածուած ու փորձուած են ամէն տեսակ փոշիներ, ողիններ, զանազան քիմիական բաղադրութիւններ, որոնք սակայն կամ գէշ հոտ մը կը թողուն, կամ կը ցնդին հոգմոյ առաջին շունչին։ Անգղիական բժշկական մեծ օրագիր մը, Lancet, յետ մի առ մի յիշելու ամէն կարելի միջոցները, կը վճռէ որ լաւագոյն է դեռ նորէն հնոյն դառնալ, և թէ ամէնէն աւելի ազդու, և միւս ամէն միջոցներէ շատ աւելի գործնականն է... . արեւը։ Արեւը ջերմութիւնը մահադիթ է ամէն տեսակ ախտածին մանրէներու։ Քոյս ապացուցած է որ արեւու ճառագայթները արագ կերպով կը սպաննեն ասուրներու, կտաններու և սպիտակեղինաց վրայ բուժանորդուած հիւժախտի սերմերը։ Իացէ՛ք ուրեմն պատուհանները, և թողուցէ՛ք որ արեւը մտնէ համարձակ։

5. — Աֆրէ տը Միւսսէ եւ ճատրակի խաղը .

Նոր հրատարակուիլ սկսող օրագիր մը, որ Բարբոս մէջ լոյս կը տեսնէ, և որ միայն ճատրակի խաղով կը զբաղի, կը պատմէ թէ ինչպէս Աֆրէ տը Միւսսէ յամառ ճատրակամու մ'էր։

Գիշերներու հեղինակը հոչակաւոր Caffé de Régence-ի մէջ ամէնէն անուանի խաղացողներէ մին էր, Կիզոյի, Տըքազէս զուգարն և Սուդ մարէշալին հետ։ Երկու ձիերով թագաւորին վրայ յարձակումը,

որ անլուծանելի խնդիրներէ մէկը կը համարուէր, բանաստեղծը լուծած էր իրեն յատուկ դրութեամբ մը, և այդ պատճառաւ ալ կը կոչուէր՝ «Միասէի խնդիր»:

1848 փետրուար 24ին, մինչդեռ սրճարանին մօտերը, փողոցներու մէջ արիւնշահող ընդհարում մը կ'ըլլար, Միասէ հանդարտ կերպով նստած էր խաղալու Տըլըկորկ անունով մէկու մը հետ, որ (չենք գիտեր ինչո՞ւ) «փիղերու որսորդ» կը կոչուէր: Գնտակ մը եկաւ սրճարանի հայ յելին ջախջախեց և զայն կտոր կտոր ուտոստեցուց ամէն կողմ. փիղերու որսորդը փախաւ իսկոյն, բայց բանաստեղծը, որ չէր կրնար հանդուրժիլ թագաւորի վրայ յարձակման սպառնալիքի մը տակ մնալու, կանչեց սենեկապաններէն մին, որ կ'երեւի կտորիճ խաղացող մ'ըլլալու էր, և ստիպեց զինքը խաղը շարունակելու: Եւ սակայն յաղթուեցաւ:

Նեցաւ Նոյեմբեր 6ին Ս. Ղազարու կողմէն մէջ, և իր հին ընթերցողները պիտի յիշեն Հանգուցելոյն ջանքը հայ աշխարհաբար լեզուի ընդհանրացման և զարգացման, որուն ի նպաստ՝ հրատարակեց նա երկուստարդ Բազմավէպի մէջ՝ ժողովրդեան ընթերցելի գրական վէպեր:

Հ. Գրիգոր Վ. Ճէլալեան, որդի Աբիսողոմայ և Համուրճեան Թագուհւոյ՝ ծնած ի Կ. Պոլիս 1835ի օգոստոսին. տասնեմէկ տարեկան հասակին — 1846ին — ծննդեան Անտոն անունով՝ Ս. Ղազար կը զրկուի, ուր սովորական ուսումները ընելէ ետք մեծ ջանք կ'ընէ հմտանալու զրաբար լեզուին, և 1852ի ուխտելով՝ կ'անդամակցի Միսիթարեան Միաբանութեան և 1854ի սկիզբը քահանայ կը ձեռնադրուի:

Իր արթուն միտքը, որ մինչև ցիւրը ծնութիւն իր հետ պահեց՝ ծառայեցուց կէս դարէ աւելի՝ Միաբանութեանս վարչական և զբաղմուն գործերուն: 1860ին վանքիս տպարանի վարչութիւնը ստանձնեց

ՀԱՆԳԻՍ

Հ. ԳՐԻԳՈՐ Վ. ԺԵԼԱԼԵԱՆԻ

Ի Ս. ՂԱԶԱՐ

Այլ ո՞վ դու ծառ վարսաւոր,
Մէն մի զարդուցող այդ հրաժեշտ,
Մէն մի աւուրցող ածեալ մահ՝
Չափէ կենացդ ըզսաման:

Նոյեմբերի — 1859 — Բազմավէպի մէջ, իր անդրանիկ քերթուածով՝ այսպէս կը վերջացնէր «Անկուստ տերևոց»ը, Հ. Գրիգոր Վ. Ճէլալեան. ու 53 տարի ետք, աշնան՝ այդ միևնոյն Նոյեմբերին՝ կ'իյնայ ինքն ալ իբրեւ տերև մը՝ Միսիթարայ ծառէն, ի սուգ թողլով Միաբանութիւնս, Մ. Ռափայէլեան վարժարանի մէջ իրեն աշակերտած սաները, իրեն ընկերութիւնը վայելող ազգայինները: — «Բազմավէպ»ը ցատկ կը գոմէ իր նախկին աշխատակցին ու խմբագրին մահը՝ որ տեղի ու



և վարեց ամբողջ չորս տարի: Վնենտկոյ Մ. Ռափայէլեան վարժարանի տեսչութիւնը վարեց կրկին անգամ, նախ 1876—80, յետոյ 1885—91 և այս շրջաններէն յանձնեց ազգին ուսմամբ զարգացած երիտասարդներ, որոնք ցարդ երախտապարտ կը մնան իրենց եռանդուն Տեսչին խնամքներուն: Յետոյ Պոլիս գնաց՝ Միաբանութեան Գործակալութեան պաշտօնով ուր թողած յիշատակն անմոռաց կը մնայ: 1903էն մինչև մահը, մինչև 77 երրորդ տարիքը՝ Մուրատ—Ռափայէլեան կալուածոց